ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» մայիսի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝
Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ
Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ
Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝
Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝
Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 16-րդ օրվա (13.05.2022թ.)՝ ժամը 10:00-ն.
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.05.2022թ.՝ ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է, որ 1-ին, 2-րդ և 3-րդ

չափաբաժինների մասով ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր(ներ) (գործարք) առկա չէ:

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2
ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	ք. Երևան, Չարենց փ. 37
ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	Ավան, Հ. Հովհաննիսյան 24/7
Էյչ Գրուպ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	
1	Լազերային տպիչներ	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	92812500	20%	111375000	92812500	20%	111375000.00	
1		ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	141256500	20%	169507800	141256500	20%	169507800.00	
1		ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	150000000	20%	180000000	150000000	20%	180000000.00	
2	Ձայնագրառման համակարգեր	ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	300000000	20%	360000000	300000000	20%	360000000.00	
2		ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	331500000	20%	397800000	331500000	20%	397800000.00	
3	Սեղանի համակարգիչներ	ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	280728250	20%	336873900	230000000	20%	276000000.00	
3		Էյչ Գրուպ ՍՊԸ	301262500	20%	361515000	263189850	20%	315827820.00	
3		ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	300000000	20%	360000000	300000000	20%	360000000.00	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 16.05.2022թ.՝ ժամը 10:30-ին և

- 1-ին չափաբաժնի մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից,
- 2-րդ չափաբաժնի մասով ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից,
- 3-րդ չափաբաժնի մասով ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. մայիսի 18-ին՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «18» մայիսի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

1.1 ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 1-ին չափաբաժնի մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, 3-րդ չափաբաժնի մասով ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.2 ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2 կամ Հավելված N 1.3), ինչպես նաև 2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված)

առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար.

- 1-ին չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

2.2 ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) (այսուհետ՝ Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ Հավելված N 1.2-ին վերաբերող տեղեկատվության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրի փոխարեն նշված է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/9» ծածկագիրը: Միաժամանակ հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7)-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի **«4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից նշում կատարված է Հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնում, տվյալ դեպքում Հայտարարագրի 4.7.3.-րդ դաշտում կատարված նշումն ավելորդ է:

- 3-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (այսուհետ Նկարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ Նկարագրում բացակայում են հրավերով սահմանված «գործարանային արտադրության (заводская сборка)» բառերը, հրավերով սահմանված է «առնվազն՝ 6MB **Smart** Cache», սակայն Նկարագրում նշված է «6MB Cache», հրավերով սահմանված է «ետնամաս՝ առնվազն **4**xUSB 2.0 (ներկառուցված)», սակայն Նկարագրում նշված է «ետնամաս՝ **2**xUSB 2.0 (ներկառուցված)»:

2.3 ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ Հավելված 1-ին վերաբերող տեղեկատվության մեջ, ինչպես նաև դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրի փոխարեն նշված է «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-22/9/Բ/9/ԿԾ» ծածկագիրը, դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ սխալ է նշված պատվիրատուի անվանումը՝ «Դատական դեպարտամենտ»-ի փոխարեն նշված է «ՀՀ ոստիկանության զորքեր», դիմում-հայտարարության երրորդ նախադասության մեջ գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական, լրացված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը (լրացված է մասնակցի հայերեն անվանումը), ինչպես նաև փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. մայիսի 20-ին՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետի պահանջներով՝ հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ին, ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **մայիսի 19-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» մայիսի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի և ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի և ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում հայտերի շտկման նպատակով ներկայացած փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. մայիսի 25-ին՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «25» մայիսի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի և ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

1.1 Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից հայտի շտկման նպատակով ներկայացած փաստաթղթերը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

2-րդ չափաբաժնի մասով ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից հայտով (այսուհետ՝ Հայտ) առաջարկվել է ձայնագրառման համակարգեր «Ֆեմիդա» կամ «ԱԿՏՈՒԱՐԻՈՒՍ»: Հրավերով սահմանվել է «SRS Femida ծրագիր (արտոնագրված և ակտիվացված (անժամկետ))», Հայտով առաջարկվել է «SRS Femida ծրագիր կամ ՊԿ «АКТУАРИУС» ծրագիր (արտոնագրված և ակտիվացված (անժամկետ))», հրավերով սահմանվել է «Դատական ձայնագրառման համակարգ SRS Femida կամ համարժեքը», Հայտով առաջարկվել է «Դատական ձայնագրառման համակարգ SRS Femida կամ САВФИП «АКТУАРИУС»», հրավերով սահմանվել է «SRS Femida ծրագիր CD կամ DVD կրիչով», Հայտով առաջարկվել է «SRS Femida ծրագիր կամ ՊԿ «АКТУАРИУС» ծրագիր CD կամ DVD կրիչով»: Հրավերով սահմանվել է նաև, որ համակարգն ունենա «միկշեր, բազմաալիքային աուդիո ինտերֆեյս, SRS Femida Audio Interface 8x4 USB կամ համարժեքը» և «դինամիկ խոսափող SRS Voice Clear (6 հատ) կամ համարժեքը»: Վերջիններիս մասով Հայտով առաջարկվել են համապատասխանաբար «միկշեր, բազմաալիքային աուդիո ինտերֆեյս, SRS Femida Audio Interface 8x4 USB **կամ ՊԿ «АКТУАРИУС» Web-интерфейс**» և «դինամիկ խոսափող SRS Voice Clear (6 հատ) **կամ Микрофоны/MP3; AAC (6 հատ)**»: Գնահատող հանձնաժողովը որոշեց, որ

«ԱԿՏՈՒԱՐԻՈՒՍ» ձայնագրառման համակարգի մասով Հայտով առաջարկված **«ПК «АКТУАРИУС» Web-интерфейс»** և **«Микрофоны/MP3; AAC»** չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից

-ներկայացված հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար,

-2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը «Ֆեմիդա» ձայնագրառման համակարգի մասով համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար, իսկ «ԱԿՏՈՒԱՐԻՈՒՍ» ձայնագրառման համակարգի մասով չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է անբավարար:

1.2 Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից հայտի շտկման նպատակով ներկայացած փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

3-րդ չափաբաժնի մասով հրավերով սահմանվել է «դիմերեսի հատված՝ առնվազն 2xUSB 3.0», «ետնամաս՝ առնվազն 4xUSB 2.0 (ներկառուցված)»: ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ն ներկայացրած հայտով առաջարկել է «դիմերեսի հատված՝ 6xUSB 3.0 (ներկառուցված)», «ետնամաս՝ 2xUSB 2.0 (ներկառուցված)»՝ ներկայացնելով նաև պարզաբանում /կցվում է/: Հիմք ընդունելով, որ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտով առաջարկվող ապրանքը բավարարում է հրավերով նախատեսված ապրանքի ֆունկցիոնալ և որակական չափորոշիչներին, ինչպես նաև, որ ընթացակարգի շրջանակում նշվածի հետ կապված որևէ պարզաբանում չի պահանջվել, որի դեպքում գնահատող հանձնաժողովը ընդունելի կհամարեր նմանատիպ առաջարկը, այն հանգամանքը, որ նույն չափաբաժնի մասով ընթացակարգի մյուս մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները զգալի գերազանցում են առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցին հաջորդող մասնակցի գնային առաջարկը գերազանցում է ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը 39 827 820 ՀՀ դրամով (յուրաքանչյուր համակարգչի մասով շուրջ 72 414 ՀՀ դրամով), հաշվի առնելով նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1)-ին մասը, որի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ՝ գնահատող հանձնաժողովը որոշեց, որ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը բավարարում է հրավերով սահմանված պահանջին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից

-ներկայացված հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար,

-3-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 2-րդ չափաբաժնի մասով ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 3-րդ չափաբաժնի մասով ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի, ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի հայտերը մերժել,

- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի հայտը մերժել,

- 3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների Էյչ Գրուպ ՍՊԸ-ի, ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց, նիստը կասեցնել, գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ առաջարկելով հնարավորություն ստեղծել 2-րդ չափաբաժնի մասով ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Համակարգում գնահատել գնահատատող հանձնաժողովի սույն արձանագրության 1.1 կետով կայացված որոշման համաձայն՝ ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված «Ֆեմիդա» ձայնագրառման համակարգի մասով, հնարավորություն ընձեռելով նաև հետագայում մասնակցին ծանուցվող պայմանագրի նախագծում ներառելու բավարար գնահատված տեխնիկական բնութագիրը:

Համակարգի առանձնահատկություններով պայմանավորված ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը ևս գնահատատող հանձնաժողովի սույն արձանագրության 1.2 կետով կայացված որոշման համաձայն Համակարգում կգնահատվի վերոնշյալ հնարավորությունները ստեղծելուց հետո:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության
Դատական Դեպարտամենտի
Ղեկավարի Ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ
Պարոն Լևոն Հովհաննիսյանին

Ք. Երևան 19 մայիսի, 2022թ.

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Մեր կողմից 3-րդ չափաբաժնով առաջարկվող համակարգչի ետնամասում **2x USB 2.0** (ներկառուցված) և դիմերեսի հատված՝ **6xUSB 3.0** (ներկառուցված) բնիկների առկայությունն ապահովում է ի սկզբանե հրավերով նախատեսված 6 հատ USB պահանջը: Հարկ եմ համարում հայտնել նաև, որ տվյալ USB–ների բաշխվածությունը ոչ մի էական ազդեցություն չի ունենում համակարգչի ֆունկցիոնալ և գործառութային աշխատանքի վրա: Գտնում եմ, որ հրավերով նախատեսված պայմանը կրում է ընդամենը դիզայներական մոտեցում:
Հարկ եմ համարում հայտնել նաև, որ մեր կողմից առաջարկված գինը հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցից պակաս է շուրջ 39.8 միլիոն ՀՀ դրամի չափով:
Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում, ինչպես նաև պետական և ընդհանրապես բոլոր գնումներն իրենց բնույթով կրում են ոչ թե ձևական, այլ բովանդակային բնույթ, տվյալ դեպքում Դատական Դեպարտամենտի կարիքների բավարարման համար համապատասխան հզորության համակարգչի ապահովումը, ուստի խնդրում եմ ներկայացվող տեխնիկական բնութագիրը գնահատել բավարար:

Հարգանքով,
«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Արմեն Բալդրյան

Digitally signed by BABURYAN HOVHANNES
4007850364
Date: 2022.05.19 15:32:24 AMT

37 Charentsi str., Yerevan 0025, Armenia
(+374) 10 581111 | info@unicomp.am
www.unicomp.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«01» հունիսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Ի պատասխան Դատական դեպարտամենտի 25/05/2022թ. թիվ ԴԴ-3-Ե-4282 ԴԴ/256-22 գրության (կցվում է)՝ 31/05/2022թ. ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է թիվ 26/26-1/9982-2022 գրությունը (կցվում է):

1. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022 թվականի մայիսի 31-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պատասխան գրությանբ հայտնվել է, որ 25/05/2022թ. թիվ ԴԴ-3-Ե-4282 ԴԴ/256-22 գրությամբ ներկայացված խնդրի լուծումը էլեկտրոնային աճուրդների համակարգում տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել, ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը eauction.armeps.am համակարգում գնահատել բավարար՝ կատարելով համապատասխան նշում, որ 2-րդ չափաբաժնի մասով eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը «Ֆեմիդա» ձայնագրառման համակարգի մասով համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար, իսկ «ԱԿՏՈՒԱՐԻՈՒՍ» ձայնագրառման համակարգի մասով չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է անբավարար,
- ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը eauction.armeps.am համակարգում գնահատել բավարար,
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, ընտրված մասնակիցների՝ 1-ին չափաբաժնի մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, 2-րդ չափաբաժնի մասով ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի, 3-րդ չափաբաժնի մասով ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագրեր:

2. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա: Պատասխանատու ստորաբաժանման առաջարկությամբ նախատեսվում է գնումների պլանում կատարել փոփոխություններ, անգործության ժամկետը լրանալուց հետո ընտրված մասնակիցներից ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ին և ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ին առաջարկել կնքվելիք պայմանագրերի շրջանակներում մատակարարվելիք համապատասխանաբար թվով 15 հատ ձայնագրառման համակարգերի և թվով 280 հատ սեղանի համակարգիչների մասով պայմանագրերը կնքել առկա ֆինանսական միջոցներով, մնացած մասով՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև 2022 թվականի մայիսի 31-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պատասխան գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի և ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի հետ պայմանագրերը կնքել փաստաթղթային եղանակով՝ պայմանագրերի նախագծերում կատարելով համապատասխան փոփոխություններ, ինչպես նաև ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի հետ կնքվելիք պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրում ներառելով բավարար գնահատված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Տեղեկատվության փոխանակումը (ծանուցումներն) իրականացնել մասնակիցների էլեկտրոնային փոստերի հասցեների միջոցով՝ պահպանելով այդ գործողությունների համար ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե-4282 ՀՀ/256-22

«25» մայիսի 2022թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավանեսյան,

Սույնով տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով հրապարակված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի 2022թ. մայիսի 25-ի նիստի արդյունքում գնահատվել են առաջին տեղը գրաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /գնահատող հանձնաժողովի 2022թ. մայիսի 25-ի թիվ 7 արձանագրության պատճենը կցվում է/:

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի 2022թ. մայիսի 25-ի նիստում կայացված որոշումները՝ խնդրում ենք eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հնարավորություն ստեղծել 2-րդ չափաբաժնի մասով ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության 1.1 կետով կայացված որոշման համաձայն՝ ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված միայն «Ֆեմիդա» ձայնագրառման համակարգի մասով, հնարավորություն ընձեռելով նաև հետագայում մասնակցին ծանուցվող պայմանագրի նախագծում ներառելու բավարար գնահատված տեխնիկական բնութագիրը:

Միաժամանակ հայտնում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա: Հաշվի առնելով Դատական դեպարտամենտի կարիքների բավարարման հրատապությունը և այն հանգամանքը, որ պայմանագիր կնքելուց հետո համաձայնագիր կնքելու դեպքում կպահանջվի նվազագույնը լրացուցիչ ևս 15 աշխատանքային օր, պատասխանատու ստորաբաժանման առաջարկությամբ նախատեսվում է ընտրված մասնակիցների հետ տվյալ պայմանագրերի շրջանակներում մատակարարվելիք ապրանքների որոշ բանակների մասով պայմանագրերը կնքել առակա ֆինանսական միջոցներով: Ուստի խնդրում եմ նաև հնարավորություն ստեղծել Համակարգի միջոցով մասնակիցներին ծանուցվող պայմանագրերի նախագծերով նախատեսել դրույթ՝ պայմանագրերով նախատեսված ապրանքների մի մասը ձեռք բերել առկա ֆինանսական միջոցներով, իսկ մյուս մասը հետագայում ֆինանսական միջոցներ նախատեսելու պայմանով:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝ Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն
Հեռ.՝ /+37410/ 511-787

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
էլ. փոստ՝ secretariat minfin.am
Հեռ.՝ 000000000

№ 26/26-1/9982-2022

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

25/05/2022թ. ԴԴ/256-22
գրության վերաբերյալ

Ի պատասխան վերոհիշյալ գրության հայտնում ենք, որ գրությամբ ներկայացված խնդրի լուծումը էլեկտրոնային աճուրդների համակարգում տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել, ինչով պայմանավորված առաջարկում ենք ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով՝ տեղեկատվության փոխանակումը (ծանուցումներն) իրականացնելով մասնակցի հայտում նշված էլեկտրոնային փոստերի հասցի միջոցով, պահպանելով այդ գործողությունների համար ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետները:

Միաժամանակ, խնդրում ենք նշված ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ էլեկտրոնային գնումների համակարգի բնականոն աշխատանքը վերականգնելու համար:

ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Recoverable Signature

ՍԵՐԳԵՅ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Signed by: SHAHNAZARYAN SERGEY 1202770106

ՍԵՐԳԵՅ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Ն. Մուրադյան
Հեռ. 011289328

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
ՆԱԽԱՐԱՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ
Մուտքագրման N Ս-8166
Ամսաթիվ 31.05.22